# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ

# ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԼՄԼԲՀ-ՄԱԱՊՁԲ- 25/08

գ. Լոռի Բերդ «20» փետրվարի 2025թ.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՁ Կարինե Բախշինյանը, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքները (այսուհետ՝ ապրանք)՝ **Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի հիման վրա**: իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, **Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի** ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, **Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի** ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով՝ **Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի հիման վրա:**

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով և **Գնորդի կողմից ներկայացված պահանջագրով** նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի <u>**առավելագույն**</u> գինը կազմում է **735 650 (յոթ հարյուր երեսունհինգ հազար վեց հարյուր հիսուն)** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված

...երով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

8.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

8.6 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

Լոռի Բերդի համայնքապետարան

ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7

ՀՀ 900252144028

ՀՀ ՖՆ թիվ 1 գործառն. վարչություն

ՀՎՀՀ 06954163

---------------------------------Ա. Ներսիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Կարինե Բախշինյան Ա/Ձ

ք.Ստեփանավան Գ.Նժդեհի 3/5

ՀՀ 16033005733400

ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ Ստեփանավան մ/ճ

ՀՎՀՀ 69510523

---------------------------------Կ. Բախշինյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1
«20» փետրվարի. 2025թ.
թիվ ԼՄԼԲՀ-ՄԱԱՊՁԲ- 25/08 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համարը | | Ապրանքների անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | **առավել ագույն քանակը** | հասցեն | ենթակա **առավել ագույն քանակը** | Ժամկետը*** |
| 1 | 22311100 | Բացիկներ | Գունավոր շնորհավորական բացիկներ տարբեր նկարներով, չափերի | հատ | 150 | 22 500 | 150 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 100 | 25.12.2025 |
| 2 | 22811130 | Տետր 40 էջ | Տետր վանդակավոր կամ տողերով՝ 40 թերթանոց | հատ | 135 | 27 000 | 200 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 100 | 25.12.2025 |
| 3 | 22811130 | Տետր 12էջ | Տետր վանդակավոր կամ տողերով՝ 12 թերթանոց | հատ | 30 | 6 000 | 200 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 100 | 25.12.2025 |
| 4 | 22811150 | Նոթատետր | Նոթատետր ստվարաթղթե կազմով՝ նշումների համար | հատ | 200 | 8 000 | 40 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 15 | 25.12.2025 |
| 5 | 22811170 | Կպչուն թերթիկներ նշումների համար | Գունավոր պչուն թերթիկներ նշումների համար (75x75 մմ) | հատ | 140 | 14 000 | 100 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |
| 6 | 30141200 | Հաշվիչ գրասենյակային /կարկուլյատոր/ | Էլեկտրոնային սեղանի հաշվիչ սարք ստեղնաշարով՝ նախատեսված տարբեր թվաբանական գործողությունների համար | հատ | 2 000 | 4 000 | 2 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 2 | 25.12.2025 |
| 7 | 30192100 | Ռետին սովորական | Ռետինե ջնջոց փոքր՝ նախատեսված մատիտով գրվածները մաքրելու համար | հատ | 60 | 6 000 | 100 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 100 | 25.12.2025 |
| 8 | 30192114 | Թանաք կնիքի բարձիկի համար | Թանաք կնիքի բարձիկի համար՝ հեղուկ, կապույտ գույնի | հատ | 170 | 1 700 | 10 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 10 | 25.12.2025 |
| 9 | 30192121 | Գրիչ գնդիկավոր | Գնդիկավոր գրիչներ տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի | հատ | 40 | 8 000 | 200 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 200 | 25.12.2025 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 30192128 | Գրիչ գելային | Գելային գրիչներ տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի | հատ | 70 | 3 500 | 50 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 20 | 25.12.2025 |
| 11 | 30192137 | Մատիտ | Գրաֆիտե միջուկով մատիտի անվանական տրամագծերը՝ 0,5 մմ և 2,0 մմ, կարծրությունը HB | հատ | 60 | 12 000 | 200 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 200 | 25.12.2025 |
| 12 | 30192160 | Շտրիխ | Բաղադրանյութ տպագրված տեքստը մաքրելու համար ջրային հիմքով, մինչև 20 °C չսառչող («Текст-корректор») կամ այլ օրգանական լուծիչով, 20 մլ տարողությամբ վրձնով սրվակներ: | հատ | 60 | 3 600 | 60 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 60 | 25.12.2025 |
| 13 | 30192230 | Սկոչ | Գլանափաթեթված ժապավեն 19 մմ լայնությամբ,սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 36 մ | հատ | 170 | 8 500 | 50 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |
| 14 | 30192710 | Սոսնձամատիտ, գրասենյակային | Չոր սոսինձ՝ թուղթ սոսնձելու համար | հատ | 50 | 2 000 | 40 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 40 | 25.12.2025 |
| 15 | 30192720 | Գծանշիչ | Տարբեր գույնի, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով | հատ | 140 | 7 000 | 50 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |
| 16 | 30192760 | Սրիչ սովորական | Սրիչ գրաֆիտե մատիտի համար | հատ | 50 | 1 500 | 30 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 30 | 25.12.2025 |
| 17 | 30197232 | Արագակար /ստվարաթղթից/ | Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար | հատ | 70 | 4 200 | 60 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 60 | 25.12.2025 |
| 18 | 30197233 | Թղթապանակ /ստվարաթղթից/ | Թղթապանակ կավճած ստվարաթղթից, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար | հատ | 75 | 3 000 | 40 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 40 | 25.12.2025 |
| 19 | 30197234 | Թղթապանակ կոշտ կազմով/մեծ/ | Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով:Մետաղյա ամրացման հարմարանքով: A4 (210x297մմ) ձևաչափի թղթերի համար: Թղթապանակի կռնակի բարձրությունը՝ առնվազն 70մմ: Կազմի հաստությունը՝ առնվազն 2մմ: | հատ | 700 | 56 000 | 80 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 80 | 25.12.2025 |
| 20 | 30197234 | Թղթապանակ կոշտ կազմով/միջին չափի/ | Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով:Մետաղյա ամրացման հարմարանքով: A4 (210x297մմ) ձևաչափի թղթերի համար: Թղթապանակի կռնակի բարձրությունը՝ առնվազն 50 մմ: Կազմի հաստությունը՝ առնվազն 2մմ: | հատ | 700 | 56 000 | 80 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | 30197234 | Թղթապանակ կոշտ կազմով/փոքր/ | Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով:Մետաղյա ամրացման հարմարանքով: A4 (210x297մմ) ձևաչափի թղթերի համար: Թղթապանակի կռնակի բարձրությունը՝ առնվազն 40 մմ: Կազմի հաստությունը՝ առնվազն 2մմ: | հատ | 600 | 48 000 | 80 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 70 | 25.12.2025 |
| 22 | 30197321 | կարիչ, մինչև 20 թերթի համար | Գրասենյակային կարիչ մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար | հատ | 600 | 3 000 | 5 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 5 | 25.12.2025 |
| 23 | 30197322 | կարիչ, 20-50 թերթի համար | Գրասենյակային կարիչ 20-50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար | հատ | 1 200 | 6 000 | 5 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 5 | 25.12.2025 |
| 24 | 30197323 | կարիչ, 50-ից ավելի թերթի համար | Գրասենյակային կարիչ 50-ից ավելի թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար | հատ | 2 000 | 6 000 | 3 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 3 | 25.12.2025 |
| 25 | 30197331 | դակիչ մեծ | Դակիչ մինչև 40 թերթ դակելու համար, դակած անցքերի քանակը՝ 2, քանոնով , մետաղական | հատ | 600 | 1 200 | 2 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 2 | 25.12.2025 |
| 26 | 30197332 | դակիչ միջին | Դակիչ մինչև 25 թերթ դակելու համար, դակած անցքերի քանակը՝ 2, քանոնով , մետաղական | հատ | 500 | 1 000 | 2 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 2 | 25.12.2025 |
| 27 | 30197333 | դակիչ փոքր | Դակիչ մինչև 10 թերթ դակելու համար, դակած անցքերի քանակը՝ 2, քանոնով , մետաղական | հատ | 300 | 600 | 2 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 2 | 25.12.2025 |
| 28 | 30197340 | ապակարիչ | Կարիչի ասեղ հեռացնող սարք, ասեղի համարը՝10, 24, 26 | հատ | 100 | 800 | 8 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 8 | 25.12.2025 |
| 29 | 30197622 | Թուղթ Ա4 ֆորմատի | Չկավճած թուղթ, նախատեսված գրասենյակային տպիչներով տպագրման համար (210x297) մմ: Խտությունը՝ 75 – 82,5 գ/մ$^2$:Սպիտակեցված առանց քլորի կիրառման:Սպիտակության աստիճանը՝ ոչ պակաս 90*%-ից:Փաթեթավորված 500 թերթ պարունակող տուփերով: | տուփ | 1 800 | 270 000 | 150 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 120 | 25.12.2025 |
| 30 | 30199230 | նամակի ծրար, A5 ձևաչափի | Ծրար՝ A5 (175 x 210) մմ ձևաչափի, 90% սպիտակության, 1 մ 2 մակերեսը՝ 100 գ զանգվածով N 1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող: | հատ | 20 | 1 000 | 50 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |
| 31 | 30199232 | նամակի ծրար, A4 ձևաչափի | Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ$^2$ մակերեսը՝ 100 գ զանգվածով N 1 օֆսեթային թղթից ըստ ինքնասոսնձվող | հատ | 40 | 2 000 | 50 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 32 | 30199238 | նամակի ծրար, A6 ձևաչափի | Ծրար՝ (115x225) մմ 90 % սպիտակության, 1 մ² մակերեսը՝ 100 գ զանգվածով N 1 օֆսեթային թղթից ինքնասոսնձվող | հատ | 15 | 750 | 50 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |
| 33 | 30199420 | Թուղթ նշումների համար սոսնձվածքով | Թուղթ ինքնակպչուն հիմքով, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, 50x75 մմ չափի | տուփ | 120 | 7 200 | 60 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 40 | 25.12.2025 |
| 34 | 30199430 | Թուղթ նշումների համար տրցակներով | Թուղթ նշումների համար, (75x75 մմ) 100 հատանոց տրցակներով | տուփ | 300 | 18 000 | 60 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 40 | 25.12.2025 |
| 35 | 39241141 | դանակ՝ գրասենյակային | Դանակ՝ գրասենյակային մետաղական ուղորդիչով , 18 մմ, | հատ | 80 | 800 | 10 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 10 | 25.12.2025 |
| 36 | 39263200 | գրասենյակային գիրք, մատյան | Գրասենյակային գիրք, մատյան | հատ | 530 | 5 300 | 10 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 10 | 25.12.2025 |
| 37 | 39263310 | օրացույց, սեղանի | Սեղանի օրացույց, A5 , 7 թերթ երկողմանի տպագրությամբ | հատ | 600 | 12 000 | 20 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 20 | 25.12.2025 |
| 38 | 39263320 | օրացույց, պատի | Օրացույց պատի՝ եռամսյակային, 12 թերթ միակողմանի տպագրությամբ, ամրացումը ՝ 3 հատ մետաղական զսպանակով | հատ | 500 | 10 000 | 20 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 20 | 25.12.2025 |
| 39 | 39263400 | ամրակ, միջին | Ամրակ մետաղյա, 33 մմ | տուփ | 150 | 6 000 | 40 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 40 | 25.12.2025 |
| 40 | 39263410 | ամրակ, փոքր | Ամրակ մետաղյա, 28 մմ | տուփ | 100 | 4 000 | 40 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 40 | 25.12.2025 |
| 41 | 39263420 | ամրակ, մեծ | Ամրակ մետաղյա, 50 մմ | տուփ | 200 | 8 000 | 40 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 40 | 25.12.2025 |
| 42 | 39263510 | սեղմակ, փոքր | Սեղմակ մետաղյա, 19 մմ | հատ | 30 | 1 200 | 40 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 40 | 25.12.2025 |
| 43 | 39263520 | սեղմակ, միջին | Սեղմակ մետաղյա, 31 մմ | հատ | 50 | 2 000 | 40 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 40 | 25.12.2025 |
| 44 | 39263530 | սեղմակ, մեծ | Սեղմակ մետաղյա 41 մմ | հատ | 70 | 1 400 | 20 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 20 | 25.12.2025 |
| 45 | 39292510 | քանոն, պլաստիկ-50սմ | Քանոն պատրաստված պլաստիկից , ճկվող , երկարությունը 50 սմ | հատ | 250 | 5 000 | 20 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 20 | 25.12.2025 |
| 46 | 39292510 | քանոն, պլաստիկ-15սմ | Քանոն պատրաստված պլաստիկից , ճկվող , երկարությունը 15 սմ | հատ | 100 | 2 000 | 20 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 20 | 25.12.2025 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 47 | 30192233 | Միլիկոն | Միլիկոնե ձողեր, որոնք օգտագործվում են սոսնձե ատրճանակների համար | հատ | 50 | 2 000 | 40 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 40 | 25.12.2025 |
| 48 | 30193200 | Սեղանի վրա դրվող դարակաշար՝ փաստաթղթերի համար | Դարակաշար A4 ֆորմատով թղթերի համար՝ 3 հարկանի, տակտիրները՝ ցանցավոր մետաղից, ընդհանուր բարձրությունը՝ 25սմ | հատ | 2 500 | 5 000 | 2 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 2 | 25.12.2025 |
| 49 | 30197100 | Կարիչի մետաղական ասեղներ /մեծ/ | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 24/6-1M | տուփ | 130 | 5 200 | 40 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 30 | 25.12.2025 |
| 50 | 30197111 | Կարիչի մետաղական ասեղներ /փոքր/ | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ No,10-1M | տուփ | 70 | 3 500 | 50 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |
| 51 | 30197120 | Կոճգամ | Կոճգամներ սրածայր կոշտ մակերևույթին թղթի ամրացման համար, ստվարաթղթե տուփերով | տուփ | 100 | 2 000 | 20 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 20 | 25.12.2025 |
| 52 | 30197231 | Թղթապանակ էլաստիկ | Էլաստիկ թղթապանակ որտեղ թղթերը միացվում են: A4 թղթերի համար | հատ | 140 | 4 200 | 30 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 30 | 25.12.2025 |
| 53 | 30197231 | Ֆայլ Ա4 ֆորմատի /70գ/ | Թափանցիկ պոլիմերային թաղանթ՝արագակարներին ամրացնելու հնարավորությամբ A4 (210x297մմ) ձևա-չափի թղթերի համար: Հաստությունը՝ 25* - 40* միկրոն: | տուփ | 1 200 | 36 000 | 30 | Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 30 | 25.12.2025 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 735 650 | | | | |

Ծանոթություն: Հավելված N 1-ում նշված է առավելագույն քանակը և մատակարարումը կատարվելու է Գնորդի կողմից ներկայացված պահանջագրի հիման վրա: Գնորդի փաստացի կարիքներից ելնելով նախատեսնած քանակը ամբողջությամբ կարող է չպատվիրվել, և մինչև տարվա ավարտը չպակվիրված մասով պայմանագիրը կհամարվի լուծված: Պահանջագրի հիման վրա մատակարարված ապրանքի ընդհանուր գումարը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 80 %-ից

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Լոռի Բերդի համայնքապետարան | Կարինե Բախշինյան Ա/Ձ |
| ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7 | ք.Ստեփանավան Գ.Նժդեհի 3/5 |
| ՀՀ 900252144028 | ՀՀ 16033005733400 |
| ՀՀ ՖՆ թիվ 1 գործառ. վարչություն | ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ Ստեփանավան մ/ճ |
| ՀՎՀՀ 06954163 | ՀՎՀՀ 69510523 |
| ------------------------------Ա. Ներսիսյան | ------------------------------Կ. Բախշինյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 2
«20» փետրվարի. 2025թ.
թիվ ԼՄԼԲՀ-ՄԱԱՊՁԲ- 25/08 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համարը | Ապրանքների անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | Գրասենյակային նյութեր | 0 | 0 | 200.000 | 350.000 | 350.000 | 350.000 | 600,000 | 600,000 | 600,000 | 735.650 | 735.650 | 735.650 | 735.650 |

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Լոռի Բերդի համայնքապետարան | Կարինե Բախշինյան Ա/Ձ |
| ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7 | ք.Ստեփանավան Գ.Նժդեհի 3/5 |
| ՀՀ 900252144028 | ՀՀ 16033005733400 |
| ՀՀ ՖՆ թիվ 1 գործառն. վարչություն | ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ Ստեփանավան մ/ճ |
| ՀՎՀՀ 06954163 | ՀՎՀՀ 69510523 |
| ----------------------------------Ա. Ներսիսյան | ------------------------------Կ. Բախշինյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |